Հաստատում եմ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

գիտության գծով պրոռեկտոր Պ. Այվետիսյան

«21» դեկտեմբերի 2023թ.

ԿԱՐԾԻՔ

(առաջատար կազմակերպության)

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Էդգար Էդիկի Ալեքսանյանի «Հայաստանի Հանրապետության կուսակցական համակարգի զարգացման հիմնախնդիրները կոալիցիոն կառավարության պայմաններում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

<u>Հաստատվել է</u>

Հայ-ռուսական համալսարանի Կ. Ա. Միրումյանի անվան քաղաքագիտության ամբիոնի 2023թ. դեկտեմբերի 8-ի նիստում: Նիստին մասնակցում էին փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Հ.Լ. Սարգսյանը, պատ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ա.Ս. Մանուկյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ս. Դավթյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Ն.Ա. Դունամալյանը, քաղ. գիտ. թեկնածու Ս.Ս. Շիրխանյանը, ավագ դասախոսներ Մ.Լ. Հարությունյանը, Ն.Ի.Մարգարյանը, դասախոս Ի.Ա. Քարամյանը:

Արդի քաղաքական գործընթացներում առկա մարտահրավերներին համարժեք պատասխանելու նպատակով անհրաժեշտ է համակարգված ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության կուսակցական համակարգի զարգացման միտումները: Կոալիցիոն կառավարությունների գործառման հիմնախնդիրների համակարգային վերլուծությունը հնարավորություն է տալիս ժողովրդավարացնելու ՀՀ-ում իշխանության իրականացման մշակույթը՝ զարգացնելով կոալիցիոն համագործակցությունը և հաղթահարելով քաղաքական զարգացման ճգնաժամերը: Այս համատեքստում արդի հայ հասարակության կերպափոխման բազմաչափ գործընթացը ենթադրում է կոալիցիոն համագործակցության և կոալիցիոն կառավարությունների ձևավորման հիմնախնդիրների բնականոն արդիականացում և համակարգային վերլուծություն:

Արդի ժողովրդավարական կերպափոխման պայմաններում ՀՀ-ում կոալիցիաներն անհրաժեշտություն են ոչ միայն հանրային շահի գերակայության կամ մասնակցային ժողովրդավարության կիրառման, այլև ընդարձակված օրակարգով ազգային անվտանգության ապահովման առումով: Կարելի է նշել, որ քաղաքական կոալիցիաները համագործակցության մշակույթի զարգացման այն ձևաչափն են, որոնց օգնությամբ հնարավորինս մեղմվում է գաղափարական տարբեր արժեքային բևեռներում գտնվող ուժերի ծայրահեղացումը:

Արդի քաղաքական գործընթացի գլոբալ և լոկալ իրողություններն ու մարտահրավերները գիտակիրառական առումով հետազոտական նոր հորիզոններ են բացում քաղաքական գիտության առջև՝ նորովի ուսումնասիրել ՀՀ կուսակցական համակարգի զարգացման հիմնախնդիրները կոլաիցիոն կառավարության պայմաններում: Այս իմաստով, կուսակցականագիտությունը, որպես քաղաքական գիտության հիմնարար գիտաճյուղ, շարունակում է մնալ հեռանկարային: Ենթադրվում է, որ քաղաքական կառավարման գործընթացների նման ընկալումը բազմաշերտ է և ներառում է քաղաքական զարգացման ճգնաժամերի կառավարման հիմնախնդիրը:

Վերոշարադրյալը հնարավորություն է տալիս փաստելու, որ Էդգար Էդիկի Ալեքսանյանի «Հայաստանի Հանրապետության կուսակցական համակարգի զարգացման հիմնախնդիրները կոալիցիոն կառավարության պայմաններում»

թեմայով ատենախոսությունն արդիական է, քանի որ հեղինակը ներկայացնում է ակադեմիական և փորձագիտական տարբեր մոտեցումներ հարցի վերաբերյալ և փորձում է պրոյեկտել դրանք ՀՀ քաղաքական գործընթացների վրա:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից (ութ ենթագլուխներից), եզրակացությունից, առաջարկություններից, օգտագործված գրականության և աղբյուրների ցանկից:

Ատենախոսության արդիականությունը հեղինակը պայմանավորում է կոալիցիոն կառավարության հիմնախնդրի ռազմավարական խորքային ուսումնասիրության հիմնավորմամբ, որը թույլ կտա ՀՀ-ին նոր իրողությունների պայմաններում զարգացնել կուսակցական համակարգը, դիմակայել նոր մարտահրավերներին, ձևավորել տարածաշրջանային երկրների հետ հարաբերությունների նպատակային քաղաքականություն: Ատենախոսության մեջ փորձ է կատարվում վերաիմաստավորել քաղաքական գործընթացներում կուսակցության ինստիտուտի պատասխանատվության հիմնախնդիրը, իսկ ՀՀ-ում՝ կոալիցիոն համագործակցության մշակույթը՝ ըստ այդմ իրականացնելով ընդարձակված օրակարգով անվտանգության քաղաքականություն:

Հետազոտության նպատակն է վեր հանել կոալիցիոն կառավարության պայմաններում ՀՀ կուսակցական համակարգի զարգացման գործընթացում տեղ գտած անորոշությունները:

Հեղինակը փորձ է կատարել ուսումնասիրել ժողովրդավարական անցման պայմաններում ձևավորվող կոալիցիոն կառավարության հիմնախնդրի առանձնահատկություններն: Հատկանշական է, որ ատենախոսության շրջանակներում նկարագրվում է նաև Հայաստանի առաջին և երրորդ հանրապետություններում կոալիցիոն կառավարությունների գործունեությունը: Հեղինակը նաև դիտարկել է անկայունության պայմաններում 2005 և 2015 թթ. սահմանադրական փոփոխություններից հետո ՀՀ-ում ձևավորված և գործառնված կոալիցիոն կառավարությունների առանձնահատկությունները:

Վերոհիշյալ մոտեցումների համատեքստում սույն գիտահետազոտական աշխատանքը ներառել է հետևյալ թեմատիկ շրջանակը. կոալիցիոն կառավարության հիմնախնդիրները, խորհրդարանական մշակույթի

ուսումնասիրությունը, մասնակցային ժողովրդավարության զարգացումը, քաղաքական մարգինալության կանխումը, ինչպես նաև կուսակցական համակարգի գաղափարական հիմքի հստակեցումը:

Որպես աշխատության մեթոդաբանական հիմք նշվում են գիտական վերլուծության վարքաբանական և համակարգային ուսումնասիրության մեթոդներ,ինչպես նաև համեմատական վերլուծություն սիներգետիկական մեթոդաբանության հիմքով: Տարբեր մեթոդների զուգամիտմամբ ներկայացված է հասարակություն, պետություն, քաղաքացի և կուսակցություն ինստիտուտների միջև փոխհարաբերությունների բազմաչափությունը: Նշված մեթոդների համակարգված կիրառումը հնարավորություն է տալիս հեղինակին վերլուծելու և բացահայտելու կուսակցական համակարգի կայացումը զարգացող երկրների քաղաքական գործընթացների ժողովրդավարացման համատեքստում:

Որպես աշխատանքի գործնական արժեք ներկայացվում է կուսակցական համակարգի բնականոն արդիականացման և կոալիցիոն կառավարության գործառնման ռազմավարական գնահատումը արդի քաղաքական գործընթացներում, ինչպես նաև ՀՀ կուսակցական համակարգի բնականոն արդիականացմանն ուղղված մոտեցումներն ու ՀՀ-ում դրա հիմքի վրա կուսակցությունների մասին նոր օրենքի ընդունման նպատակադրումը:

Ատենախոսության ուսումնասիրության արդյունքները նպատակահարմար է օգտագործել ՀՀ-ում կոալիցիոն համագործակցության զարգացման, ինչպես նաև ընդարձակված օրակարգով անվտանգության ռազմավարությունների մշակման ու կատարելագործման ընթացքում:

Հետազոտության շրջանակներում օգտագործվել են ժողովրդավարական անցման, կուսակցականագիտության, քաղաքական ինստիտուտների բնականոն գործառնման հիմնախնդիրներին նվիրված բազմաթիվ մենագրություններ և գիտական հոդվածներ:

Ատենախոսության եզրակացությունը գիտական է և արտացոլում է աշխատության մեջ նշված հիմնական խնդիրները: Ուսումնասիրության արդյունքում, հայեցակարգային բնույթի եզրահանգումներից և հետևություններից բացի, մշակվել են մի շարք պրակտիկ առաջարկություններ խորհրդարանական

մշակույթի հիմնախնդրի գնահատման ուղղությամբ: Ուսումնասիրության արդյունքում արված եզրահանգումները, հետևություններն ու ընդհանրացումներն ունեն տեսական և կիրառական արժեք:

Ատենախոսությունը ամբողջական գիտական ուսումնասիրություն է, որը հեղինակը կատարել է ինքնուրույն:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածները համապատասխանում են ատենախոսության հիմնական օրինակի բովանդակությանը:

Այնուհանդերձ, կարծում ենք, որ ատենախոսությունն ավելի կշահեր, եթե հեղինակը նկատի ունենար մեր կողմից **առաջարկվող դիտողությունները**.

1. Ատենախոսության օբյեկտը և առարկան, մեր կարծիքով, անհրաժեշտ է ձևակերպել հետազոտության նպատակից և խնդիրներից առաջ:
2. Ներածության մեջ ներկայացված առարկան միայն մասնակի է համապատասխանում աշխատության թեմային, քանի որ մի դեպքում՝ հեղինակը նշում է «կուսակցական համակարգի զարգացման գործընթացներում կոալիցիոն կառավարությունների ուսումնասիրումը», իսկ մյուս՝ «ՀՀ կուսակցական համակարգի զարգացման հիմնախնդիրները կոալիցիոն կառավարության պայմաններում»: Այսինքն առարկայի սահմանման շրջանակներում շեշտը դրվում է «կոալիցիոն կառավարությունների» ուսումնասիրման վրա (նաև չի նշվում Հայաստանի Հանրապետության գործոնը), իսկ թեմայի անվանման մեջ ընդգծվում են «ՀՀ կուսակցական համակարգի զարգացման հիմնախնդիրները»: Առկա է որոշ հակասություն, որը արտահայտվում է աշխատանքի ամբողջ կառուցվածքի մեջ:
3. Ատենախոսության թեմային և մասնագիտական դասիչին համապատասխան կարելի էր ավելի համարժեք կառուցել հետազոտության բովանդակությունը. առաջին գլուխը զուտ տեսական է, երկրորդ գլխի առաջին երկու ենթագլուխները ՀՀ առաջին և երրորդ հանրապետություններում կոալիցիոն կառավարությունների հետ կապված

պատմական իրողությունների շարադրանքն է, երկրորդ գլխի երրորդ ենթագլուխը՝ նորից տեսականորեն ծանրաբեռնված է, իսկ երրորդ գլխի ենթագլուխները, նվիրված խորհրդարանական մշակույթին և խորհրդարանական վերահսկողությանն ու պատասխանատվությանը համապատասխանաբար, միջնորդավորված ձևով են կապված հետազոտության առարկայի հետ:

4. «Կուսակցական կոալիցիան՝ որպես քաղաքական ցանցերի արժեքային կողմնորոշիչների կերպափոխման ինստիտուտ. հասարակական ընտրության պարադոքսները» ենթագլխում ներկայացվում են ընտրության տարբեր պարադոքսներ, որոնք հանրահայտ են քաղաքագիտության մեջ (օրինակ՝ Կոնդորսեի պարադոքսը) և անհասկանալի է, թե ինչու՞ է հեղինակը այդպիսի մեծ ուշադրություն դարձնում տարակարծությունների վրա, որոնք կապված են հիմնականում «ընտրության» խաղերի տեսության հետ, այլ ոչ թե կուսակցութունների կոալիցիա ստեղծելու շարժառիթների հարցում (այն դեպքում, երբ 1.3 ենթագլոխը նվիրված է հենց «խաղային կառուցակարգերին»):

5. Առաջին գլխի վերջում (էջ 57) հեղինակը իր եզրակացության մեջ նշում է, որ կոալիցիոն կառավարությունը նպաստում է խմբային և հանրային շահերի համադրմանը, մրցունակության բարձրացմանը և քաղաքական իշխանության իրականացման մշակույթի կայացմանը: Մեր կարծիքով այս միտքը կրում է վերացական բնույթ, քանի որ իրականում կոալիցիայի ստեղծումը որոշ դեպքերում միտված է իշխանության լեգիտիմացմանը: Մյուս գլխում հեղինակը արդեն նշում է Հայաստանի օրինակով, որ «նախագահական կառավարման մոդելներում ձևավորված կոալիցիաների դերն ու նշանակությունը հանրային քաղաքականության օպտիմալության տեսանկյունից խիստ վիճարկելի է» (էջ 86):

6. Հատկանշական է, որ հեղինակը գրում է «տրիպարտիզմի» հայեցակարգի մասին, նշելով դրա կարևորության մասին նաև քաղաքական գործընկերության շրջանակներում, սակայն ցանկալի կլիներ ներկայացնել

դրա կապը արդի պայմաններում ՀՀ-ում կոալիցիոն կառավարության ձևավորման հնարավորության հետ (2020 թ. հետո):

Նշված թերությունները չեն նվազեցնում աշխատանքի ամբողջական գիտական արժեքը:

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով թեմայի արդիականությունն ու իրականացված հետազոտական աշխատանքը, վերջնարդյունք եզրահանգումները և առաջարկությունները՝ գտնում ենք, որ Էդգար Էդիկի Ալեքսանյանի քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Հայաստանի Հանրապետության կուսակցական համակարգի զարգացման հիմնախնդիրները կոալիցիոն կառավարության պայմաններում» թեմայով ատենախոսությունը բավարարում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն էլ արժանի է ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
Քաղաքագիտության ամբիոնի վարիչ
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ /Հ. Լ. Սարգսյան/

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Լ. Սարգսյանի
ստորագրությունը հաստատում եմ
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

Գիտական քարտուղար
Բանասիրական գիտությունների թեկնածու Ռ. Կասաբաբովա